Հաշվետվություն

ԵՊՀ ԻՄ Ուսանողական գիտական ընկերության 2023-2024 ուստարվա գործունեության

ԵՊՀ ԻՄ ՈՒսանողական գիտական ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանում իրականացրել է թվով 14 գիտական, կրթական, մշակութային ծրագրեր և միջոցառումներ, մասնավորապես՝ 4 դասընթաց-քննարկում հետևյալ թեմաներով՝ «Ինչպես գրել էսսե», «Բերդի տարածաշրջանի պատմամշակութային վայրերը», «Հետազոտական աշխատանք գրելու մեթոդաբանությունը», «Իրազեկում linux օպերացիոն համակարգի մասին», 1 գրքի քննարկում, 1 էսսեների մրցույթ, 5 ինտելեկտուալ խաղ, 1 գրական ցերեկույթ։ Ուսանողական գիտական ընկերությունը մեկնարկել է նոր ծրագիր «Բանահավաքչություն» խորագրով, որի ընթացքում ժողովվում է բանահյուսական նյութը և պահպանվում։

«Ինչպես գրել էսսե» դասընթացի շրջանակներում ուսանողները հնարավորություն ունեցան ծանոթանալ ոչ միայն էսսեի ժանրային առանձնահատկություններին, այլև գործնական առաջադրանքների միջոցով ամրապնդեցին էսսեի ստեղծագործական ընթացքի կարողությունները, կարողացան կիրառել սերտած ունակությունները։

«Բերդի տարածաշրջանի պատմամշակութային վայրերը» դասընթաց-քննարկման ընթացքում անդրադարձ կատարվեցին հետևյալ հարցերին՝ զբոսաշրջության զարգացմանն ուղղված ի՞նչ քայլեր պիտի իրականացվեն, ինչպիսի՞ ավանդազրույցներ կան պատմամշակութային վայրերի, տեղանունների ստուգաբանական բովանդակությունների հետ կապված։ Կարևորվեցին տարածաշրջանի զբոսաշրջային ռեսուրսները, և քննարկվեցին տարածաշրջանում զբոսաշրջության զարգացման հեռանկարները։

«Հետազոտական աշխատանք գրելու մեթոդաբանությունը» դասընթացի շրջանակներում ուսանողներին ներկայացվեցին հետազոտական աշխատանք գրելու մեթոդաբանությունը։ Ուսանողները ծանոթացան հետազոտական աշխատանք գրելու մեջ առանցքային դրույթների, որպեսզի հնարավորինս խուսափեն խոչընդոտներից։

«Իրազեկում linux օպերացիոն համակարգի մասին» դասընացի ընթացքում խոսվեց linux-ի ստեղծման, զարգացման, առանձնահատկությունների մասին: Տեղի ունեցավ հարց-պատասխան քննարկում, ցուցադրվեցին մի քանի գործողություններ linux-ով:

ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ-ի կողմից իրականացվել է նաև Ա. Շիրվանզադեի «Քաոս» վեպի քննարկումը: Ուսանողների կողմից ընդգծվեց ստեղծագործության արդիականության հարցը, զուգահեռներ տարվեցին մեր օրերի հետ:

Երկրորդ կիսամյակում ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ-ն կազմակերպել է թվով 4 «Ամենախելացին» ինտելեկտուալ խաղ, որից 3-ը տարածաշրջանի Աչաջուր, Գանձաքար և Իջևանի ավագ դպրոցներում, իսկ մեկը՝ եզրափակիչը, անց է կացվել մասնաճյուղում: Տարածաշրջանի դպրոցներում ինտելեկտուալ խաղի իրականացման նպատակներից մեկը համալսարան-դպրոց կապի ամրապնդումն է:

Ուսանողական գիտական ընկերությունը պարբերաբար հանդես է գալիս ուսանողներին գիտաժողովների, դասընթացների, կրթաթոշակների մասին իրազեկող հայտարություններով՝ նպատակ ունենալով ուսանողների շրջանում բարձրացնել տեղեկացվածության մակարդակը:

Ուսանողական գիտական ընկերությունը ՈՒԳԸ ֆակուլտետային նախագահների միջոցով ակտիվ համագործակցում է ֆակուլտետների ամբիոնների հետ տեղեկացվածության և կրթական, գիտական, մշակութային ծրագրերի իրականացման համար:

ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ-ն սերտ համագործակցությունները շարունակել է ԵՊՀ ԻՄ-ի պրակտիկայի կազմակերպման և շահակիցների բաժնի հետ, Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի հետ, «Ռեստարտ Իջևան» ՀԿ-ի հետ: